

Փոխանորդ Անդրիանուպոլսեցի Պօղոս վարդապետէն (յետոյ պատրիարք Կ. Պոլսոյ և ծայրագոյն կառավարիչ Ս. Աթոռոյ) և ամիրայից կողմէն Բարձրագոյն Իրան մատուցուած յիշատակագրին մէջ Հայոց անյայտացած ու յափշտակուած վանքերու ու ստացութեանց յիշատակութեանց առթիւ հետեւեալ տողերը կը զբռնուին. «... բայց հետզհետէ յայլեւայլ պստաւորաց անայի մնացեալ, օտարաց յափշտակեալ եւ անհետ եղեալ են. որպէս եւ յեր Յորդանանու ի տեղի միրտուքեան Տեսուն մերոյ Յովհաննու Կարապետի կանոնացեալ վանք մի սգոյի մերու՛մ յաւկանգնոյ անտակն վկայի . . . » (ձեռ. Թ. 893)։ Ասկէց աւելի զօրուոր փաստ մը չի կրնար բլաւ հաստատելու համար հայկական վանքի մը գոյութիւնը Յորդանանու եզերքը յանուն Ս. Յովհաննու Մկրտչի, և միևնոյն ժամանակ ապացուցանելու թէ ան շինուած էր մեր Փրկչին մկրտութեամբ տեղւոյն մօտ. վասն զի Աւետարանի, աւանդութեան և ուղևորաց՝ մասնաւորապէս Արքուլֆի նկարագրութեան համաձայն մեր Տէրը մկրտուած էր Յորդանանի անդիւր կողմը. հետեւաբար Հայոց վանքն ու եկեղեցին ալ շինուած էին գետին ձախ ափունքին վրայ, այսինքն մօտը այն վանքին՝ որուն կրօնաւորները կը պահպանէին մկրտութեան եկեղեցին։ Հայկական վանքին բուն տեղւոյն համար յիշատակարան կը պակտի. բայց հաւանական իբր փաստ կրնանք յառաջ բերել Բրօֆ. Goussenի 1923 ին գերմաներէն թարգմանութիւնը Ս. Տեղեաց այն ծիսարանին որուն վրացերէնը (Թ. 3) կը գտնուի Բարիդի Ազգ. Մատենադարանին մէջ։ Նոյն ձեռագրին հետ (ԺԱ.—ԺԲ. դար) բաղդատուած է Երուսաղէմի Ս. Խաչ և Վրաստանի Սաղպերդ վանքերէն բերուած ձեռագիր Տաղարաններուն (Ժ. դար) մէջ բովանդակուած ծիսարաններու տարբերակներուն հետ։ Նոյն ծիսարանին մէջ կը կարգանք հետեւեալ հատուածը. «Ս. Յովհաննու ի Յորդանան. մեծ տակաւորութիւն Յունիար Եիւ, մինչ ըստ Սաղպերդի օրինակին, Յունիար Եիւ մեկ շաբաթ առաջ մեծ տակաւորութիւն գետին անդիւր կողմը (Սախա, Բարրա օճակոյակ գետին վրայ), միևնոյն ծիսարանը Ս. Յովհաննու տակաւորութիւն ցոյց կուտայ 3 եւ 7 Յունիարի Տիբերուսի Լճին ափակց վրայ» (Տե՛ս R. B. 1924, էջ 611-623)։ Երուսաղէմի ծիսարանի այս հատուածը մեզ խորհրդածել կուտայ թէ Դեկտ. 25 ին Ծննդեան տօնը կատարող եկեղեցիները Յունվար 6 ին Յորդանանի մէջ կը կատարեն Աստուածայայտ-